լի խօսքեր։ Մտնում ենք խմբագրութեան էջերում, ուր գոնէ պարտական էինք բարոյական լինել. այնտեղ հայհոյում ենք միմեանց։

Անցեալ տարուայ հրապարակախօսութեանս պատճառով՝ «Մեղուի» խմբագրութեան կողմից ինձ վերայ յարձակւեց մի հինաւուրց հերոս. պ. Շմաւոնեանը։ Նա ինձ անուանել էր ռուսահայոց եւ տաճկահայոց մէջ ատելութիւն սերմանող. թափել էր ինձ վերայ մի կարկուտ թշնամական բառերի։ Ես այդ առանց ապացոյցների գրուած տողերին չը պատասխանեցի. պակասութիւնը վերագրելով խմբագրութեան աշխատակցի հասակին։ Ես բաղդաւոր էի համարում, որ պ. Շմաւոնեանը ինձ թշնամանում էր Մ. Նալբանդեանի շարքին։ Հանգուցեալի յիշատակի հետ, ես ուրախութեամբ կը բարձրանամ Շմաւոնեանների կառուցած կախաղանի վերայ։

Այս տարի դարձեալ նոյն հինօրեայ խմբագրութիւնը յարձակւում է։ Պէտք է ասել որ, նա մեծ յառաջադիմութիւն է խիստ քաղաքավարի. ասում ենք հաճե-